ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՉԸ

ՕԼԻՄՊՈՍ

(ըստ Նիկոլայ Կունի)

Լուսավոր ու բարձրաբերձ Օլիմպոս լեռան վրա, շրջապատված բազում աստվածներով, իշխում է Զևսը: Օլիմպոսից բարձր լայնորեն տարածվում է կապտավուն անհուն երկինքը, և նրանից ոսկեղեն լույս է հորդում: Զևսի թագավորության մեջ ո՛չ անձրև է գալիս, ո՛չ ձյուն. այնտեղ հավերժ պայծառ ու բերկրալի ամառ է: Իսկ ցածում քուլա-քուլա սահում են ամպերը՝ երբեմն-երբեմն ծածկելով հեռավոր երկիրը: Այնտեղ՝ երկրի վրա, գարնանն ու ամռանը հաջորդում են աշունն ու ձմեռը: Հրճվանքին և ուրախությանը փոխարինելու են գալիս դժբախտությունն ու վիշտը: Ճիշտ է, աստվածներն էլ գիտեն, թե ինչ բան է վիշտը, բայց դա վաղանցուկ է. Օլիմպոսում կրկին տիրում է հրճվանքը:

Խրախճանք են անում աստվածներն իրենց ոսկեղեն պալատներում, որոնք Զևսի որդին է կառուցել: Զևս արքան բազմած է իր բարձրադիր ոսկեհուռ գահին: Զևսի առնական, աստվածային դեմքը շնչում է վսեմությամբ և իր իշխանության ու հզորության վեհափառ գիտակցությամբ: Նրա գահի մոտ են խաղաղության և հաղթանակի աստվածները:

Ահա ներս է մտնում գեղանի և վսեմափայլ աստվածուհի Հերան՝ Զևսի կինը: Զևսը հարգալից վերաբերմունք ունի կնոջ հանդեպ: Երբ, շքեղ զգեստների մեջ իր գեղեցկությամբ շողալով, խրախճանքի դահլիճ է մտնում Հերան, բոլոր աստվածները ոտքի են ելնում ու խոնարհվում ամպրոպային Զևսի կնոջ առաջ: Իսկ նա՝ հպարտ իր հզորությամբ, քայլում է դեպի ոսկեհուռ գահը և բազմում Զևսի կողքին: Հերայի գահի մոտ կանգնում է նրա սուրհանդակը՝ ծիածանի աստվածուհի Իրիսը՝ մշտապես պատրաստ սրընթաց սավառնելու ծիածանային թևերով և կատարելու Հերայի հրամանները երկրի ամենահեռավոր ծայրերում:

Խրախճանք են անում աստվածները: Զևսի դուստրը և Տրոյա-

յի արքայորդին աստվածային ուտեստ ու խմիչք են մատուցում: Գեղեցիկ մուսաները զվարճացնում են նրանց երգով ու պարով: Ձեռք ձեռքի տված՝ նրանք շուրջպար են բռնում, իսկ աստվածները սքանչանում են նրանց թեթևասահ շարժումներով և հավերժ դեռատի հրաշք գեղեցկությամբ: Գնալով ավելի ուրախ է դառնում օլիպիացիների խրախճանքը: Այստեղ են վճռում աստվածներն իրենց գործերը, որոշում աշխարհի ու մարդկանց բախտը:

Զևսը Օլիմպոսի մարդկանց առաքում է իր շնորհները և երկրի վրա կարգ ու օրենքներ հաստատում: Զևսի ձեռքին է մարդկանց ճակատագիրը՝ երջանկությունն ու դժբախտությունը, բարին ու չարը, կյանքն ու մահը: Երկու մեծ կարաս կա դրված Զևսի պալատի դարպասի մոտ. մեկի մեջ բարին է, մյուսի մեջ՝ չարը: Զևսը նրանց միջից առնում է չարն ու բարին և ուղարկում մարդկանց: Վա՜յ նրան, ով կխախտի Զևսի սահմանած կարգը երկրի վրա և չի հետևի նրա օրենքներին: Այդժամ կզայրանա մեծն Զևսը, և նրա գլխի մազերը ահեղորեն ցից-ցից կկանգնեն, աչքերը կշողան անզուսպ փայլով, ցասումնալից կմեկնի իր ամենազոր աջը, և որոտը կգլորվի երկնքով մեկ, կփայլատակի բոցեղեն կայծակը, և կցնցվի բարձրաբերձ Օլիմպոսը:

Միայն Զևսը չէ, որ պահպանում է օրենքները: Օլիմպոսում է և Զևսի դուստրը՝ աստվածուհի Դիկեն, որ հետևում է արդարադատությանը: Խիստ պատիժ է տալիս Զևսը անարդար դատավորներին, երբ Դիկեն նրան հայտնում է, թե նրանք չեն հետևում Զևսի սահմանած օրենքներին: Աստվածուհին ճշմարտության պաշտպանն է և խաբեության թշնամին:

Բառային աշխատանք

1. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը:

Բար_ռաբերձ, *լայն_ռեն*, *Զ_ս*, *թա_ավորական*, *խրա_ճանք*, *խա_տել*, *սր_նթաց*, *շանթար_ակ*, *արքայոր_ի*, *խա_եություն*, *_լիմպոս*, *կար_*:

2. Բաղադրիչները միացնելով՝ բառեր կազմիր՝ *լույս* + *շող*, *արքա* + *որդի*, *երկիր* + *գունդ*, *ցասում* + *լից*, *շուրջ* + *պատել*, *թեթև* + *սահ*, *արդար* + *դատ*:

3. Տեքստից դուրս գրիր հականիշ բառեր և կազմիր հականշային զույգեր:
4. Հայերենի բացատրական բառարաններից (տպագիր և էլեկտրոնային) օգտվելով՝ գտիր և դուրս գրիր տեքստի անծանոթ բառերի բացատրությունները:

Տեքստային աշխատանք

1. Արտահայտիչ կարդա տեքստը՝ պահպանելով հայերենին հատուկ արտասանությունն ու շեշտադրումը:
2. Որոշիր տեքստի հիմնական միտքը:
3. Բնութագրիր Զևսին: Ինչպե՞ս է նա իշխում Օլիմպոսի բնակիչներին:
4. Տեքստում գտիր և դուրս գրիր կերպարների արտաքին նկարագրությունները, բնավորությունը բնութագրող հատվածները (խմբային աշխատանք):

Կերպար	Արտաքին նկարագրություն	Բնավորությունը բնութագրող հատվածներ

5. Կերպարների բնութագրման մեջ փորձիր գտնել սխալ վարքագծի դրսևորումներ և հիմնավորիր:
6. Հերոսին(ներին) արդարացնելու հիմնավորումները ներկայացրու դատողական խոսքով:
7. Տեքստից առանձնացրու այն պարբերությունը, որոնցում առկա է եզրահանգումը:
8. Գնահատիր հերոսների վարքագիծը և արտահայտիր քո վերաբերմունքը:
9. Նյութի բովանդակությանը համապատասխան նկարազարդումներ արա:

ՈՅ, ՅՈ–ԻՈ

Հայերենում և օտար մի շարք բառերում լսվում է ոյ, գրվում է ոյ, ինչպես՝ խոյ, գոյ, Նոյ:

Հայերեն և օտար մի շարք բառերում լսվում է յո, գրվում է յո, ինչպես՝ յոթ, արդյոք, ընտանյոք, յոդ, Պյոտր:

Մի շարք բառերում լսվում է յո, գրվում է իո, այսպես՝ ռադիո, հետիոտն, միլիոն, բրաբիոն:

Մի քանի բառերում լսվում է յո, գրվում է եո, ինչպես՝ թեորեմ, քամելեոն, Նապոլեոն:

Առաջադրանքներ

1. Լրացրո՛ւ բաց թողնված *ոյ*, *յո*, *իո* կամ *եո* երկհնչյունները:

   Պ__տր խ__, արդ__ք, Ն__, գ__ական, խ__ակ, ն__եմբեր, __թ, __դ, ռադ__, բրաբ__ն, թ__րեմ, քամել__ն, լեգ__ն, Նապոլ__ն, օր__րդ, ռադ__կայան, չեմպ__ն, միլ__ն, մարմար__ն, ամբ__ն:

2. Հետևյալ բառերում երկհնչյունի հնչյունափոխությամբ կազմի՛ր նոր բառեր:

   Մշակույթ, առօրյա, խարտյաշ, հույս, կույր, բույր, աշխույժ, հրապույր, մտասույզ, ժանյակ, զրույց, եղբայր, երևույթ, համբույր, գույն, գործունյա, մատյան, վայրկյան, ատյան, կույտ, պատյան, լույս, ցույց, դաշույն, թույն, սառույց, բույն, կյանք, ընկույզ, շահույթ:

Յ ՁԱՅՆԱԿԱՊ

Հայերենում իրար հաջորդող երկու ձայնավորների միջև սովորաբար գրում կամ արտասանվում է յ կիսաձայնը, ինչպես՝ կայարան, Գայանե, էակ:

Երկու ձայնավորների միջև գրվող կամ արտասանվող յ կիսաձայնը կոչվում է ձայնակապ:

Ձայնակապը երկհնչյուն է կազմում ոչ թե նախորդ, այլ հաջորդ ձայնավորի հետ: Այսպես՝ հարավային բառում ձայ-

նակապը ա և ի ձայնավորների միջև է: Երկհնչյունը ոչ թե այ հնչյունակապակցությունն է, այլ՝ յի հնչյունակապակցությունը: Տողադարձելիս կամ վանկատելիս երկհնչյունի կիսաձայնը և ձայնավորը ընկնում են նույն վանկում, օրինակ՝ հա-յե-լի:

Առաջադրանքներ

1. Խմբավորի՛ր արմատի յ և ձայնակապ յ ունեցող բառերը:

Հոյակապ, ենթակայություն, թեյաման, գոյական, դիմակայել, ծառայողական, խոյակ, հեռակայել, խնայողաբար, խոյահարել, հայեցողություն, հայորդի, հմայել, հմայիչ, արքայաբար, բայաձև, դերբայական, գարնանային, մայիս, մնայուն, նայել, շոյել, սփյուռքահայ, կայազոր, կայուն, կոյուղի, հայասեր:

Արմատի յ	յ ձայնակապ
թեյաման	ենթակայություն

2. Բաղադրիչների տրված զույգերով կազմի՛ր բառեր՝ կիրառելով յ կիսաձայնի ուղղագրության կանոնը:

Առկա և -ություն, արդի և -(ա)կան, արքա և որդի, բարո և -(ա)կան, մի և -ակ, մի և -անալ, մնա և -ուն, նախօրե և -ին, վերարկու և -(ա)վոր, ենթակա և -(ա)կան, աղա և -(ա)կան, սատանա և -(ա)կան, բարո և զուրկ, բացակա և -ություն, սպա և կույտ, ժողովածու և -ում, ընծա և գիր, ծառա և -ող, ծառա և -ություն, հասցե և տեր, հմա և -իչ, ձի և -(ա)վոր:

3. Լրացրո՛ւ յ ձայնակապն այն բառերում, որոնցում անհրաժեշտ է:

Վերարկու_ով, հա_ելի, արքա_որդի, վաշխառու_ի, աղյուս_ակ յուրա_ին, միմի_այն, Միքա_ել, Գայանե_ի, ծառուղի_ով, շղթա_ել, հմա_իչ, թե_արան, երեկո_ան, ծաղրածու_ի, քնքու_շ, զգու_շավոր, գա_իսոն, վա_րկենական, անասնաբու_ժ:

4. Ըստ անհարաժեշտության բառերում տեղադրի՛ր յ ձայնակապը և կազմի՛ր նախադասություններ՝ շառաչ_ուն (ածական), շառաչ _ուն (գոյական), խոխոջ_ուն (ածական), խոխոջ_ուն (գոյական), գոչ _ուն (ածական), գոչ _ուն (գոյական):

5. Հետևյալ անձնանուններում լրացրո՛ւ բաց թողնված տառերը:

Ամաս_ա, Արուս_ակ, Անան_ա, Ազար_ա, Ա_դա, Ամալ_ա, Արփ_ար, Աս_ա, Արաքս_ա, Մար_ամ, Ջուլ_ետա, Սրապ_ոն, Վիկտոր_ա. Վոլոդ_ա, Օֆել_ա, Նապոլ_ոն, Տար_ել, Բուն_աթ, Եղ_ա, Եղ_ազար, Երեմ_ա, Երմոն_ա, Զաքար_ա, Էմիլ_ա, Էլ_ա, Իլ_ա, Լիլ_ա, Լյոա_ա, Ման_ա, Մետաքս_ա, Մար_ետա:

6. Հետևյալ տեղանուններում լրացրո՛ւ բաց թողնված տառերը:

Աս_ա, Ավստր_ա, Ադր_ատիկ ծով, Անգ_ա, Բյուզանդ_ա, Բուլ-ղար_ա, Դան_ա, Զապորոժ_ե, Բրիտան_ա, Գերման_ա, Մոն-ղոլ_ա, Շոտլանդ_ա, Շվեդ_ա, Պովոլժ_ե, Ճապոն_ա, Սոֆ_ա, Վ_ետնամ. Վ_ենա, Վիկտոր_ա, Ֆրանս_ա:

7. Տրված բառերում *յ* հնչյունը լրացրո՛ւ այն բառերում, որոնցում անհրաժեշտ է:

Սերգե_ի, միջօրե_ի, արքա_որդի, բու_ի, քնքու_շ, այրուձի_ի, հար-յուր_ակ, սյուն_ակ, պայուս_ակ, Սոնա_ի, Անի_ի, շ_ուղ, վա_րկյան, վերարկու_ի, ճ_ուղ, ժողովածու_ում. զգու_շ, վա_ելուչ, ձի_եր, հե-տի_ոտն, տի_եզերք, րոպե_ական, Կարինե_ի, Մարո_ի, մրջ_ուն, տու_ժ, աշխու_ժ, հեռակա_ել, Միքա_ել, լռել_այն, ջղա_ին, Ռա-ֆա_ել, շրջագա_ել, երեխա_ի, Քրիստինե_ի, մի_ակ, Իսրա_ել, է_ական, խնա_ել, խոխոջ_ուն (գոյ.), խոխոջ_ուն (ած.), հա_ելի, լեգե_ոն, Նա_իրի:

8. Ընդգծի՛ր երկհնչյունները և հիմնավորի՛ր ընտրությունդ:

Շոյել, նայել, արքայանիստ, Միքայելի, Մարոյի, նոյեմբեր, Իս-րայել, Եղիայի: